

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 դեկտեմբերի 2010 թվականի N 1579-Ն

### «ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի, 36-րդ հոդվածի 2-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան և հիմնադրի կողմից սահմանված կարգով պետական կազմակերպության շահույթի տնօրինման ուղղությունների սահմանման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հաստատել «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության շահույթի օգտագործման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝ ուսումնասիրել սույն որոշման 1-ին կետով հաստատված կարգի մեկամյա գործադրման փորձը և, անհրաժեշտության դեպքում, Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն այդ կարգում համապատասխան փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության

վարչապետ

S. Սարգսյան

2010 թ. դեկտեմբերի 7

Երևան

## Կ Ա Ր Գ

### «ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

1. Սույն կարգը սահմանվում է «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի, 36-րդ հոդվածի 2-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան և կարգավորում է «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ հաստատություն) շահույթի օգտագործման հետ կապված հարաբերությունները:

2. Հաստատության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված նպատակների համար:

3. Հաստատությունը, համաձայն Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ՀՀՀՀՍ 37 ստանդարտի, ձևավորում է պահուստային կապիտալ:

4. Հաստատության հաշվետու տարվա շահույթը բաշխվում է հետևյալ ուղղություններով և չափերով՝

1) պահուստային ֆոնդ՝ հաշվետու տարվա շահույթի մինչև 15 տոկոսի չափով (ռիսկեր և անորոշություններ՝ ներկա արժեքի և ապագայի դեպքեր, անբարենպաստ պայմանագրեր):

2) կուտակման ֆոնդ (ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման և ոչ ընթացիկ ակտիվների վերանորոգման նպատակով)՝ հաշվետու տարվա շահույթի մինչև 35 տոկոսի չափով:

3) սպառման ֆոնդ՝ հաշվետու տարվա շահույթի մինչև 50 տոկոսի չափով, որը ներառում է՝  
ա. աշխատողների նյութական խրախուսման ֆոնդը (մասնագիտական և բարեխիղճ աշխատանքի համար),

բ. դրամական օգնության ֆոնդը (աշխատողների երկարատև հիվանդության, մահվան, աշխատողների հարազատների մահվան, ինչպես նաև ամուսնության և այլ առիթներով),

գ. բարեգործական ֆոնդը (սոցիալապես անապահով ընտանիքներից աշակերտներին օգնություն (հագուստ, տարրական դասարաններում անվճար սնունդ և այլն),

դ. այլ (կարող է ներառել կանոնադրական խնդիրների իրականացման համար նախատեսված այլ նպատակներ):

5. Հաստատության կոլեգիալ կառավարման մարմինը, հիմք ընդունելով սույն կարգի 4-րդ

կետը, մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը սահմանում է հաշվետու տարվա շահույթի բաշխման ուղղությունները և չափերը:

6. Տարեկան մինչև 3000.0 հազ. դրամ զուտ շահույթ ունեցող հաստատությունը, կոլեգիալ կառավարման մարմնի որոշմամբ, այն կարող է օգտագործել սույն կարգի 4-րդ կետով սահմանված մեկ կամ մի քանի ուղղություններով:

**(6-րդ կետը լրաց. 16.02.12 N 213-Ն)**

**(Հավելվածը լրաց. 16.02.12 N 213-Ն)**

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար**

**Դ. Սարգսյան**